



Հայաստանի կենսաբ. հանդես, 2(67), 2015

ՈՌՄԱՆՈՎՅԱՆ ԵՎ ԶԱՅԿԱԿԱՆ ԿԻՍԱԿՈՊՏԱԲՈՒՐԴ ՑԵՂԵՐԻ
ՈՉԻԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԽԱՉՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԽԱՌՆԱԾԻՆԵՐԻ
ԱՐՅԱՆ ՈՐՈՇ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

S.Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան
tatev.sargsyan@yahoo.com

Արագածոտնի մարզի Արագածավանի «Ագրոհոլդինգ» ՍՊԸ-ի ոչխարաբուծական տնտեսությունում ուսումնասիրվել հայկական կիսակոպտաքուրդ և ռոմանովյան ցեղերի ոչխարների տրամախաչումից ստացված 8, 10 ամսական և 1,5 տարեկան խառնածինների արյան որոշ ցուցանիշներ (հմունուրուրուին IgG, էրիթրոցիտներ, լեյկոցիտներ, հեմոգլոբին): Ստացված արդյունքները վկայում են խառնածին կենդանիների բարձր հարմարվողականության, կայուն իմունային համակարգի և նյութափոխանակության առավել ինտենսիվ գործընթացների մասին:

Տրամախաչում – մաքրացել – խառնածին – հեմատոլոգիական ցուցանիշներ

В овцеводческом хозяйстве ООО “Агрохолдинг” с. Арагацаван области Арагацотн были изучены некоторые гематологические показатели (иммуноглобулин IgG, эритроциты, лейкоциты, гемоглобин) 8-, 10-месячных и 1,5-годичных помесей, полученных скрещиванием романовских и армянских полугрубощерстных овец. Полученные данные свидетельствуют о высокой приспособляемости, стабильной иммунной системе и о более интенсивных процессах обмена веществ помесных животных.

Скрещивание – чистопородный – помесь – гематологические показатели

In sheep-breeding farm of “Agroholding” LLC in the village of Aragatsavan, Aragatsotn marz, some hematologic indicators (IgG immunoglobulin, an erythrocyte (red blood cell), a leukocyte (white blood cell), hemoglobin) of 8, 10 monthly and 1.5 year-old hybrids obtained by crossing of the Romanovs and Armenian semi-coarse-haired sheep have been studied. The obtained data testify to high fitness, stable immune system and more intensive processes of a metabolism of local animals.

Crossings – thoroughbred – hybrid – hematologic indicators

Ժամանակակից պայմաններում բնակչությունն ունի ոչխարի մսի օգտագործման մեջ պահանջարկ, որը մարդու մնանի հաշվեմշում առանձնանալում է իր բարձր մնանարությամբ, լիարժեքությամբ և հիմնականում անփոխարինելիությամբ [1]: Այս մեջ բանակով նաև արտահանվում է: Դրանով է պայմանավորված լավագույն համային հատկանիշներով օժտված ոչխարամսի արտադրողականության բարձրացման անհրաժեշտությունը: Ոչխարների մսային արտադրողականությունը որոշվում է շատ գործոններով, որոնցում իր ուրույն դերն ունի կենդանիների բարձր կենսունակության ապահովումը: Կենդանիների կենսունակությունը կախված է միջավայրի, կերակրման ու խնամքի պայմաններից, ինչպես նաև ծննդներից ստացած ժառանգական հիմքից ու նյութափոխանակության գործընթացների ակտիվությունից: Այդ տեսանկյունից օրգանիզմի կենսունակության ապահովման գործում իր առանձնահատուկ դերն ունի կենդանու այդունք, որը մասնակցում է շնչառական և նյութափոխանակության գործընթացներին և բազում այլ ֆունկցիաների հետ մեկտեղ ունի պաշտպանական նշանակություն: Այս պաշտպանումը է օրգանիզմը մանրէներից, վիրուսներից և դրանց թույներից, ինչպես նաև օրգանիզմի համար օտարածին նյութերից: Այս գործառույթն իրականացվում է պլազմայի մակրեսպանական հատկությամբ, լեյկոցիտների ֆագոցիտային ակտիվությամբ, ինչպես նաև իմու-

Նակոմպետենսս թշիշների՝ լիմֆոցիտների շնորհիվ, որուք իրականացնում են բջջային մենահատուկ խմունխուները [2]: Օրգանիզմի ներքին միջավայրի, նրա պաշտպանական համակարգի ակտիվության և նյութափոխանակության գործընթացների գլահատման համար կարող են հիմք ծառայել արյունաբանական ցուցանիշները: Դրանով է պայմանավորված մեր հետազոտությունների հետաքրքրությունը ռոմանովյան և հայկական կիսակոպ-տարուրդ (ՀԿՎԲ) ցեղերի ոչխարժների տրամախաչությամբ ստացված խառնական ցուցանիշների դիմամիկայի փոփոխության նկատմամբ:

Ուստի սույն աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել տրամախաչման արդյունքում ստացված խառնաձին կենդանիների արյան որոշ ցուցանիշների, որոնցով պայմանավորված են վեցիններիս հարմարվածությունը, կենսունակությունը և նյութափոխանակությունը:

Նյութ և մեթոդ: Հետազոտությունները կատարվել են Արագածոտնի մարզի «Ազրոհոլ-դինզ» ՄՊՀ ոչխարժութական տևանելությունում, որտեղ առաջին անգամ Հայաստանի Հանրապետությունում 2011թ-ից արհետալավան սերմանավորման եղանակով իրականացվում է ռոմանովյան և ՀԿՎԲ ոչխարժների տրամախաչում: Հետազոտությունները կատարվել են «Վաղիմիր Ավագյանի» անվան թժկական կենտրոնում: ՄՊՀ և «Ա.Բ.ՄԵԴ» լաբորատորիաներում: Ուսումնասիրել ենք 8, 10 ամսական և 1,5 տարեկան կենդանիների արյան որոշ ցուցանիշներ և համեմատել նոյն տարիքի տեղական մաքրացել կենդանիների արյան ցուցանիշների հետ: Յուրաքանչյուր հմբից վերցվել է 5-ական նմուշ: Ընդհանուր առամարտ ուսումնասիրվել է 30 գլուխ մաքրացել և խառնաձին կենդանիների արյան նմուշները: Հետազոտել ենք հետևյալ ցուցանիշները՝ հմունգործություն IgG-ի պարունակությունը, երիթրոցիտների քանակը, հեմոգլոբինի պարունակությունը և լեյկոցիտների քանակը: Երիթրոցիտների, հեմոգլոբինի և լեյկոցիտների որոշումն կատարվել է ֆուսումետրիկ, իսկ իմունոգլոբուլին IgG-ին՝ հմունոտուրիդիմետրիկ եղանակներով:

Արդյունքներ և քննարկում: Արյունաբանական ցուցանիշների հետազոտությունների տվյալները ներկայացված են աղ. 1-ում: Կենդանիներն ուսումնասիրման որոշ ժամանակահատվածում գտնվել են կերակրման, ինսամքի ու պահկածքի միևնույն պայմաններում: Արյունաբանական ցուցանիշները (Երիթրոցիտներ, լեյկոցիտներ, հեմոգլոբին, իմունոգլոբուլին) որոշվել են մինչև կերակրումը:

Աղյուսակ 1. Արյան որոշ ցուցանիշների հետազոտման արդյունքները ըստ կենդանիների տարիքի

Հասակային խումբ	Մաքրացել (ՀԿՎԲ)		Խառնաձին (Ռոմ. X ՀԿՎԲ)	
	M±m	σ	M±m	σ
Իմունոգլոբուլին IgG (գ/լ)				
8 ամսական	7,63± 0,24	0.55	8,01± 0,06	0.14
10 ամսական	8,05± 0,39	0.87	8,88± 0,32	0.72
1,5 տարեկան	8,83± 0,19	0.43	9,69± 0,38	0.86
Երիթրոցիտների քանակը 1 մմ³ արյան մեջ				
8 ամսական	7,6± 0,34	0.78	8,7± 0,29	0.65
10 ամսական	8,2± 0,19	0.43	9,4± 0,39	0.87
1,5 տարեկան	9,8± 0,35	0.79	10,6± 0,34	0.77
Հեմոգլոբին, %				
8 ամսական	98± 3,48	7.77	103± 3,68	8.21
10 ամսական	106± 2,74	6.12	111± 2,12	4.74
1,5 տարեկան	119± 1,52	3.39	126± 1,30	2.91
Լեյկոցիտների քանակը 1 մմ³ արյան մեջ				
8 ամսական	7,3± 0,22	0.50	8,1± 0,37	0.84
10 ամսական	7,9± 0,28	0.64	8,8± 0,26	0.58
1,5 տարեկան	8,01± 0,14	0.33	9,0± 0,20	0.45

Կենդանիների կենսունակությունը, ֆիզիոլոգիական վիճակը և մթերատվությունը մեծապես կապված են իմունոգլոբուլինների քանակի և ակտիվության հետ: Իմունոգլոբուլինները հանդիսանում են օրգանիզմի հիմնական պաշտպանիչ սպիտակուցները և կենդանիների հմարուայ իմունիտետի գլխավոր ու գործարկվող մոլեկուլները: Շիճուկային իմունոգլոբուլին IgG-ի կազմում է բոլոր սպիտակուցների 75-80%-ը և արյան բոլոր սպիտակուցների 10-20%-ը [3]: Նրա գլխավոր և հիմնական գործառույթը ֆագոցիտոզի խթանումն է:

Հետազոտությունները ցույց են տվել, որ մաքրացել և խառնաձին կենդանիների մոտ իմունոգլոբուլին IgG-ի մակարդակը տարիքի հետ աճում է, մաքրացելի մոտ՝ 8-1,5 տարեկանում կազմել է 13,6%, իսկ խառնաձինի մոտ՝ 17,3%: Խեցես երևում է աղ. 1-ից իմունոգլոբուլին IgG-ի աճ է նկատվում խառնաձին կենդանիների տարիքային բոլոր հմբերում ի տարրերություն մաքրացել կենդանիների համապատասխան հասակների:

Այսպես, 8 ամսական մաքրացեղ մոտ այն կազմել է 7,63 գ/լ նույն հասակի խառնածինի մոտ 8,01 գ/լ, 10 ամսական մաքրացեղի մոտ 8,05 նույն հասակի խառնածինի մոտ 8,88 գ/լ, իսկ 1,5 տարեկանում՝ 8,83-ից աճել է մինչև 9,69 գ/լ: Աճը ըստ տարիքի համապատասխանաբար կազմել է 4,7%, 9,3%, 8,9%:

Վղյա ծևավլոր տարրերի պարունակությունը բնութագրում է արյունաստեղծ օրգանների և պաշտպանական մեխանիզմների ֆունկցիաները: Դայտնի է, որ էրիթրոցիտների կարևոր ֆունկցիաներից մեկը՝ թթվածինի տեղափոխումն է թոքերից հյուսվածքներ և օրգաններ: Ուստամասիրությունները ցույց են տվել, որ նույն տարիքային խմբում խառնածին կենդանիների մոտ էրիթրոցիտների քանակը ավելի բարձր է, քան հայկական կիսակողաքարուրդ՝ մաքրացեղ կենդանիների մոտ: Աճը 8 ամսական խառնածինի մոտ $8,7 \times 10^{12}/\text{l}$ է, մաքրացեղի $7,6 \times 10^{12}/\text{l}$ -ի համեմատ: 10 ամսական խառնածինների և մաքրացեղի մոտ համապատասխանաբար $10,6 \times 10^{12}/\text{l}$ և $9,8 \times 10^{12}/\text{l}$: Այսպիսով՝ ըստ տարիքային խմբերի էրիթրոցիտների քանակի աճը մաքրացեղ կենդանիների համեմատ կազմել է՝ 8 ամսականների մոտ 12,6%, 10 ամսականների մոտ 12,8%, իսկ 1,5 տարեկանների մոտ՝ 7,5%: Ինչպես իմունոգլոբուլինի, այսպես էլ էրիթրոցիտների քանակը՝ երկու խմբերում ել տարիքին զուգընթաց աճել է՝ խառնածինների մոտ $8,7 \times 10^{12}/\text{l}$ -ից հասնելով $10,6 \times 10^{12}/\text{l}$, իսկ մաքրացեղի մոտ $7,6 \times 10^{12}/\text{l}$ -ից $9,8 \times 10^{12}/\text{l}$:

Քետազոնությունների արդյունքում հեմոգլոբինի առավելացույն մակարդակը նկատվել է խառնածին մատուցների և շշակների մոտ: Այսպես, 8 ամսական խառնածին մատուցի մոտ 103 գ/լ, 10 ամսականում՝ 111 գ/լ և 1,5 տարեկանում՝ 126 գ/լ մաքրացեղի հետևյալ ցուցանիշների նկատմամբ՝ 8 ամսական 98 գ/լ, 10 ամսական 106 գ/լ, 1,5 տարեկան շշակների մոտ՝ 119 գ/լ: Կարենի է ենթադրել, որ խառնածինների մոտ էրիթրոցիտների և հեմոգլոբինի առավել մեծ պարունակությունը վկայում է տվյալ կենդանիների բարձր թթվածնային տարրության, կրանում օքսիդացման և հետևաբար նյութափոխանակության առավել հիստենիվ պրոցեսների մասին: Նշենք նաև, որ էրիթրոցիտների առավել բարձր քանակը և հեմոգլոբինով նրանց առավելացույն հագեցվածությունը մատուցի պաշտպանական պոտենցիալի առավել բարձր մակարդակի ցուցանիշներն են [4]: Օրգանիզմում ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն լեյկոցիտները, նրանք մասնակցում են օրգանիզմի պաշտպանական (ֆագոցիտոց, իմունիտետ) և վերականգնողական գործընթացներին (հակամարմինների արտադրում, թույսերի բայթայում և հեռացում): Երկու խմբերի մատուցների մոտ ել լեյկոցիտների քանակը եղել է ֆիզիոլոգիական նորմերի սահմաններում: 8 ամսական մաքրացեղի կենդանիների մոտ $7,3 \times 10^9/\text{l}$, խառնածինների մոտ՝ $8,1 \times 10^9/\text{l}$, 10 ամսական մաքրացեղի մոտ $7,9 \times 10^9/\text{l}$, խառնածինների մոտ $8,8 \times 10^9/\text{l}$ և 1,5 տարեկան մաքրացեղինը $8,01 \times 10^9/\text{l}$, իսկ խառնածիններինը $9,0 \times 10^9/\text{l}$: Տարիքի հետ երկու խմբերի կենդանիների մոտ ել տեղի է ունեցել այրան սահմանագնդիկների քանակի ավելացում, սակայն առավել բարձր մակարդակ է գրանցվել խառնածին կենդանիների բոլոր երեք տարիքային խմբերում: Դա, ըստ երևույթին, պայմանավորված է խառնածինների լավ հարմարվածանությամբ և հիվանդությունների նկատմամբ ունեցած բարձր դիմադրողականությամբ:

Յարկ է նշել, որ մեր կողմից ուսումնասիրված կենդանիների արյունաբանական ցուցանիշները գտնվում են ֆիզիոլոգիական նորմի սահմաններում: Ցուցանիշների առավել բարձր մակարդակ դիտվում է խառնածինների բոլոր տարիքային խմբերում, որոնք ստացվել են ռոմանովյան և ՀԿԿԲ ցեղերի ոչնարների տրամախաչման արդյունքում:

Ստացված արդյունքները վկայում են խառնածին կենդանիների բարձր հարմարվածանության, կայուն իմունային համակարգի և նյութափոխանակության առավել հիստենիվ պրոցեսների մասին:

Այսպիսով՝ հետազոտությունների արդյունքները վստահեցնում են, որ նոր ստացված սերունդը արյան կազմով ոչ միայն չի զիջում մաքրացեղին, այլ ընդհակառակը՝ ՀԿԿԲ ցեղի նկատմամբ ունի կենսունակության առավելություն:

ԳՐԱԿԱՆՔՆԵՐ

1. Մարմարյան Յու. Գ. Անասնաբուծության հիմունքների. Ասողիկ, Երևան, էջ 433, 2001:
2. Տերտերյան Ե.Ե., Դամբարձումյան Գ. Ռ. Մինասյան Ս. Մ., Միջթարյան Ռ. Մ. Ընտանի կենդանիների ֆիզիոլոգիա, հր. ՅԱԿ Եր., էջ 577, 2014: <http://www.aptekaonline.ru/forum2/index.php?topic=5520.0>
3. Կենդանիների ֆիզիոլոգիա, հր. ՅԱԿ Եր., էջ 577,
4. Продуктивно-биологические показатели молодняка овец северокавказской породы разных сроков отъема "Овцы, козы, шерстяное дело,, , М., 4, с. 27-29, 2012.

Ստացվել է 06.10.2014